ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.09.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/70

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ
Բողոք բերող՝ «Վագա Ֆարմ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Տեր-Վարդանյանի, Վ. Վարսանյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/73» ծածկագրով բաց մրցույթ, դեղորայքի և այլ բժշական նյութերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 25.08.2021թ.-ին ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/73» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 24.08.21թ. կայացած թիվ 5 նիստի արձանագրության թիվ 1 որոշումը:

2. Պարտավորեցնել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/73» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին հիմք ընդունել 19.08.21թ. կայացած թիվ 4 նիստի արձանագրության թիվ 1 որոշումը:

Բողոքներ քննող անձին (Գ. Ներսիսյանին) գործը մակագրվել է 25.08.2021թ.-ին:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 25.08.2021թ.-ի թիվ 450-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2020-2021թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, բողոքի քննությունը 06.09.2021թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

07.09.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/70 համարի ծածկագիրը:

15.09.2021թ.-ին և 17.09.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 15.09.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 17.09.2021թ.-ին:

2. **<u>«Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն 25.08.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1. «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի և այլ բժշական նյութերի ձեռքբերման նպատուսկով հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/73» ծածկագրու[բաց մրցույթ /այսուհետև նաև Ընթացակարգ/:

2. Հայտերի բացման ժամկետ է սահմանվել 11.08.2021թ. ժամը 15:00-ն

3. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ՎԱԳԱ ՖԱՐՄ» ՍՊԸ-ն:

4. «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/73» ծածկագրով Ընթացակարգի հանձնաժողովի նիստի 19.08.2021թվա կանի N4 արձանագրության առաջին կետի համաձայն «Մասնակիցների ներկայացրած փաստաղթերի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովն արձանագրեց, որ բոլոր փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին: Ընդունվել է որոշում կողմ-3, դեմ-0: Նշվածի արդյունքում հանձնաժողովը որոշել է մասնակիցներն հրավիրել բանակցությունների գնային առաջարկների նվազեցման շուրջ, որը տեղի է ունեցել 24.08.2021 թվականին ժամը 12.00-ին:

5. «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/73» ծածկագրով Ընթացակարգի հանձնաժողովի նիստի 24.08.21թ. կայացած թիվ 5 նիստի արձանագրության թիվ 1 որոշմամբ սահմանվել է հետևյալը.

«Ընդունել ի գիտություն, որ 21.08.2021թ-ին ՀՀ առողջապահության նախարարության կողմից ստացվել է հարցման պատասխան, համաձայն որի սույն ընթացակարգի շրջանակևեյաում բժշկական կենտրոնը չի կարող գնել ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրված ներմուծման հավաստագրերի հիման վրա ՀՀ ներմուծված այնպիսի դեղորայք, որոնք գրանցված չեն ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում:

Հաշվի առնելով նշված գրությունը, հանձնաժողովը որոշեց 19.08.21թ. կայացած թիվ 4 նիստի թիվ 1 որոշումը մասնակի վերանայել և 1, 11, 13, 17, 35, 37, 39 և 43-րդ չափաբաժիններով «ՎԱԳԱ ՖԱՐՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բավարար գնահատելու մասին որոշումը վերանայել:

Հանձնաժողովը որոշեց նշված չափաբաժինների մասով գնման ընթացակարգը կասեցնել 1 աշխատանքային օրով և մասնակցին տալ օրենսդրությամբ նախատեսված հնարավորություն՝ առաջարկերը շտկելու համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ - 0:»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպաասակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Տվյալ պարագայում «ՎԱԳԱ ՖԱՐՄ» ՍՊԸ-ն Ընթացակարգի ոչ համաչափ, ոչ մրցակցային, մասնակցիների ոչ հավասար պայմաններում մասնակցության և Ընթացակարգի խտրական լինելու արդյունքում զրկվել է պետությունն գնմանը մասնակցելու հնարավորությունից:

Այսպես, ըստ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բողոքարկվող որոշման պետական գնումների ընթացակարգի շրջանակներում անթույլատրելի է գնել ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրված ներմուծման հավաստագրերի հիման վրա ՀՀ ներմուծված այնպիսի դեղորայք, որոնք գրանցված չեն ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում:

Մինչդեռ, ՀՀ կառավարության 02.05.2013թ.ի N502-Ս որոշման հավելվածի երկրորդ կետի համաձայն Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման մարմնի կողմից (այսուհետ՝ լիազոր մարմին) սահմանված՝ Հայաստանի Հանրապետության հիմնական դեղերի ցանկում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր) ընդգրկված դեղերը ձեռք են բերվում «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով:

Տվյալ դեպքում, հաշվի առնելով, որ «ՎԱԳԱ ՖԱՐՄ» ՍՊԸ-ի Ընթացակարգով ներկայացված հայտում ներառված դեղերը ՀՀ տարածք են ներկրվել օրինական ճանապարհով և ներկրման հավաստագրի հիման վրա, ուստի և ենթակա են իրացման նաև ՀՀ պետական գնումների համակարգով:

Հետևաբար, գնահատող հանձնաժողովի ՀՀ առողջապահության նախարարության գրության վկայակոչմանը այն պնդումը, թե պետական գնումների ընթացակարգի շրջանակներում բժշկական կենտրոնը չի կարող գնել ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրված ներմուծման հավաստագրերի հիման վրա ՀՀ ներմուծված այնպիսի դեղորայք, որոնք գրանցված չեն ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում, իրավաչափ չէ: Ուստի, իրավաչափ չէ նաև գնահատող հանձնաժողովի 19.08.21 թ.-ին կայացած թիվ 4 նիստի թիվ 1 որոշումը մասնակի վերանայելու և 1, 11, 13, 17, 35, 37, 39 և 43-րդ չափաբաժիններով «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բավարար գնահատելու մասին որոշումը վերանայելու մասին 24.08.21թ. կայացած թիվ 5 նիստի արձանագրությունն թիվ 1 որոշումը:

ՀՀ քաղաքաացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի համաձայն Քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և

գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

Տվյալ դեպքում, գնահատող հանձնաժողովի վերոգրյալ որոշմամբ խախտվել է բողոք ներկայացրած անձի՝ Ընթացակարգի այլ մասնակիցների հետ հավասարությունն պայմաններում Ընթացակարգին մասնակցելու և իր ապրանքը այլ մասնակիցների հետ հավասար պայմաններում վաճառելու իրավունքից:»:

Ելնելով վերոգրյալներից՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/73» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 24.08.21թ. կայացած թիվ 5 նիստի արձանագրության թիվ 1 որոշումը:

2. Պարտավորեցնել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/73» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին հիմք ընդունել 19.08.21թ. կայացած թիվ 4 նիստի արձանագրության թիվ 1 որոշումը:

Ընկերությունը 13.09.2021թ.-ին ներկայացված լրացմամբ հայտնել է հետևյալ.

«Ձեր վարույթում է գտնվում «ՎԱԳԱ ՖԱՐՄ» ՍՊԸ-ի բողոքը՝ «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/73» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 24.08.21թ. կայացած թիվ 5 նիստի արձանագրության թիվ 1 որոշումն անվավեր ճանաչելու և 19.08.21թ. կայացած թիվ 4 նիստի արձանագրության թիվ 1 որոշումը հիմք ընդունելու պահանջով:

Ներկայացված բողոքի վերաբերյալ հայտարարությունը հրապարակել է 2021-08-26-ին: Մինչ տվյալ հայտարարության հրապարակումը՝ 25.08.2021 թվականին գնահատող հանձնաժողովը 25.08.2021 թվականի նիստի արձանագրության առաջին կետով որոշել է մերժել «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի հայտել 1, 11, 13, 17, 35, 37, 39 և 43-րդ չափաբաժիններով:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով բողոքի հիմքերը՝ Ընկերությունը լրացրել է բողոքի պահանջը և Բողոքներ քննող անձին խնդրել որպես վերջնական պահանջ ընդունել հետևյալը.

1. Պարտավորեցնել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/73» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 24.08.21թ. կայացած թիվ 5 նիստի արձանագրության թիվ 1 որոշումը:

2. Պարտավորեցնել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/73» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին հիմք ընդունել 19.08.21թ. կայացած թիվ 4 նիստի արձանագրության թիվ 1 որոշումը:

3. Պարտավորեցնել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/73» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 25.08.21թ. կայացած թիվ 6 նիստի արձանագրության թիվ 1 որոշումը:

2. «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 26.08.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԳՆ/2/13692-2021 գրությամբ դիմել է «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 25.08.2021թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 30.08.2021թ.-ի թիվ 08-188 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան <<Մեգիէլ>> ՍՊԸ-ի կողմից ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/73 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետև՝ Ընթացակարգ) վերաբերյալ 25.08.2021թ. ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/70 ծածկագրով բողոքի, հայտնում ենք հետևյալը.

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է հետևյալը.

<<1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:>>

Օրենքի 13-րդ հոդվածը սահմանում է հետևյալը.

<<1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման

առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշգրտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:>>

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

<<1. Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

2. Գնումների գործընթացին որևէ երկրի ռեզիդենտ հանդիսացող անձի (անձանց) մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:>>

Ընթացակարգի Հրավերի 8.2 կետի համաձայն <<Հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով:>>, <<Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:>>

Ընթացակարգում ներառված բոլոր գնման առարկաների համար առկա է հետևյալ պահանջը. <<Ապրանքները պետք է համապատասխանեն ՀՀ Կառավարության 02.05.2013թ. թիվ 502-Ն որոշմամբ հաստատված պահանջներին:>>: <<Վագա Ֆարմ>> ՍՊԸ-ն 1, 11, 13, 17, 35, 37, 39 և 43-րդ չափաբաժիններին մասնակցել է դեղերի պետական գրանցամատյանում չգրանցված դեղորայքով, սակայն ներկայացրել է ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրված ներմուծման հավաստագրեր տվյալ ապրանքների մասով: Ընդ որում, մասնակցի ներկայացրած տեխնիկական հատկանիշները (ազդող նյութի միջազգային անվանում, դրանց չափաբաժիններ, դեղաձև) ամբողջությամբ համապատասխանել են հրավերի պահանջներին: Դրանով պայմանավորված, գնահատող հանձնաժողովը 19.08.2021թ. կայացած նիստին Մասնակցի հայտը գնահատել է բավարար: Այնուամենայնիվ, դեղերի չգրանցված լինելու և հավաստագրեր ներկայացնելու փաստով պայմանավորված Պատվիրատուն հարցում է կատարել ՀՀ առողջապահության նախարարություն և ստացել պատասխան, համաձայն որի սույն ընթացակարգի շրջանակներում բժշկական կենտրոնը չի կարող գնել ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրված ներմուծման հավաստագրերի հիման վրա ՀՀ ներմուծված այնպիսի դեղորայք, որոնք գրանցված չեն ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում: Հիմք ընդունելով նշված գրությունը Գնահատող հանձնաժողովը փոխել է իր որոշումը տվյալ չափաբաժիններով <<Վագա ֆարմ>> ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու մասով և ընկերությանը տրամադրել մեկ աշխատանքային օր հայտը շտկելու համար: Այնուհետև հայտը չշտկվելու փաստով պայմանավորված ընկերության հայտը մերժվել է:

Ամփոփելով վերը նշվածները գտնում ենք, որ առաջնորդվելով ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրված գրությամբ, գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ և գնման գործընթացի խախտում չի իրականացրել:

Կից ներկայացվում են հարցման, հարցման պատասխանի, գնահատող հանձնաժողովի համապատասխան նիստերի արձանագրությունների պատճենները:»:

3. <u>ԳԲՔԱ-LO-2021/70 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից դեղորայքի և այլ բժշական նյութերի ձեռքբերման նպատակով 27.07.2021թ.-ին հայտարարվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/73» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցի (այսուհետ նաև՝ Հավելված 1) համաձայն՝ վաճառողը ապրանքի հետ միասին պետք է ներկայացնի ՀՀ Կառավարության 02.05.2013թ. թիվ 502-Ն որոշմամբ նախատեսված փաստաթղթերը: Ապրանքները պետք է համապատասխանեն ՀՀ Կառավարության 02.05.2013թ. թիվ 502-Ն որոշմամբ հաստատված պահանջներին:

iii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 24.08.2021թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ 21.08.2021թ-ին ՀՀ առողջապահության նախարարության կողմից ստացվել է հարցման պատասխան, համաձայն որի սույն ընթացակարգի շրջանակներում բժշկական կենտրոնը չի կարող գնել ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրված ներմուծման հավաստագրերի հիման վրա ՀՀ ներմուծված այնպիսի դեղորայք, որոնք գրանցված չեն ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում: Հաշվի առնելով նշված գրությունը, հանձնաժողովը որոշել է 19.08.2021թ. կայացած թիվ 4 նիստի թիվ 1 որոշումը մասնակի վերանայել և 1, 11, 13, 17, 35, 37, 39 և 43-րդ չափաբաժիններով «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բավարար գնահատելու մասին որոշումը վերանայել: Հանձնաժողովը որոշել է նշված չափաբաժինների մասով գնման ընթացակարգը կասեցնել 1 աշխատանքային օրով և

մասնակցին տալ օրենսդրությամբ նախատեսված հնարավորություն՝ առաջարկերը շտկելու համար:

v. Հանձնաժողովի 25.08.2021թ.-ի նիստի թիվ 6 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ «Վագաս Ֆարմ» ՍՊԸ-ն շտկված փաստաթղթեր սահմանված ժամկետում չի ներկայացել՝ էլ. փոստով ներկայացնելով լիազոր մարմին ներկայացրած բողոքը: Հանձնաժողովը որոշել է մերժել «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի հայտը 1, 11, 13, 17, 35, 37, 39 և 43-րդ չափաբաժինների մասով:

vi. ՀՀ առողջապահության նախարարության կողմից ի պատասխան «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 16.08.2021թ.-ի թիվ 08.372 տրամադրված գրության համաձայն՝ Կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1933-Ն որոշման 1-ին կետի 2-րդ կետով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մայիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» N 502-Ն որոշման հավելվածում լրացվել է 2.3-րդ կետ, համաձայն որի՝ ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ կարող են ձեռք բերվել նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 202-Ն որոշմամբ հաստատված կարգին համաձայն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության թույլտվության հիման վրա ներմուծված չգրանցված դեղեր ներմուծման հավաստագրի առկայության դեպքում:

Միաժամանակ տեղեկացրել են, որ թիվ 1933-Ն որոշմամբ նախատեսված իրավակարգավորումը կիրառելի է բացառապես ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ, իսկ ներկայումս Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում սահմանված կարանտինը թեև պայմանավորված է կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) առաջացած արտակարգ իրավիճակով, սակայն այն իրենից չի ներկայացնում ռազմական կամ արտակ արգդրություն: Հետևաբար «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲ ընկերությունը պետական միջոցների հաշվին դեղորայք ձեռք բերելիս չի կարող առաջնորդվել Կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1933-Ն որոշման 1-ին կետի 2-րդ կետով սահմանված արտոնությամբ:

4. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված

փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 25.08.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ

կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/73» ծածկագրով բաց մրցույթի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.8-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.8-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող կամ վերջինիս լիազորած անձը՝ ներկայացնելով այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում

է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ գործադիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ընդ որում՝ որոշ բացառություններով, այդ թվում՝ հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ կառավարության 02.05.2013թ.-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 502-Ն որոշման հավելվածի համաձայն՝

1. Սույն չափորոշիչները սահմանում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի գնման տեխնիկական բնութագրերի կազմմանը ներկայացվող պահանջները:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման մարմնի կողմից (այսուհետ՝ լիազոր մարմին) սահմանված՝ Հայաստանի Հանրապետության հիմնական դեղերի ցանկում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր) ընդգրկված դեղերը ձեռք են բերվում «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով: Հայաստանի Հանրապետության հիմնական դեղերի ցանկը, դեղերի պետական գրանցամատյանը (ռեեստր) տեղադրված են լիազոր մարմնի պաշտոնական «www.moh.am» կայքում:

2.1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության, Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Պրոֆ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն ՓԲԸ»՝ հակաուռուցքային դեղերի մասով, «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ՝ հակաուռուցքային դեղերի մասով կարիքների համար, հիմք ընդունելով «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, կարող են ձեռք բերվել պետության կարիքների համար լիազոր մարմնի հատուկ թույլտվությամբ կիրառվող չգրանցված դեղեր, որոնք գրանցված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված միջազգային մասնագիտական կազմակերպություն սահմանելու մասին» N 172-Ա որոշմամբ սահմանված միջազգային մասնագիտական կազմակերպության անդամ երկրում կամ ունեն Հայաստանի Հանրապետության առողջապահության համաշխարհային կազմակերպության նախաորակավորում:

2.2. Սույն հավելվածի 2.1-ին կետով նախատեսված դեղերի համար գնման ընթացակարգի հրավերով նախատեսվում է, որ մրցույթի արդյունքում առաջին տեղն զբաղեցրած մատակարարը որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի հետ միաժամանակ պարտավորվում է ներկայացնել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից տրված հավաստող տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված միջազգային մասնագիտական կազմակերպությունների անդամ երկրում գրանցված լինելու կամ Առողջապահության համաշխարհային կազմակերպության նախաորակավորում ունենալու մասին:

2.3. Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ կարող են ձեռք բերվել նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 202-Ն որոշմամբ հաստատված կարգին համաձայն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության թույլտվության հիման վրա ներմուծված չգրանցված դեղեր՝ ներմուծման հավաստագրի առկայության դեպքում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից դեղորայքի և այլ բժշական նյութերի ձեռքբերման նպատակով 27.07.2021թ.-ին հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/73» ծածկագրով բաց մրցույթի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված

1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով սահմանվել է, որ վաճառողը ապրանքի հետ միասին պետք է ներկայացնի ՀՀ Կառավարության 02.05.2013թ. թիվ 502-Ն որոշմամբ նախատեսված փաստաթղթերը: Ապրանքները պետք է համապատասխանեն ՀՀ Կառավարության 02.05.2013թ. թիվ 502-Ն որոշմամբ հաստատված պահանջներին: Ընթացակարգին մասնակցելու համար հայտ է ներկայացրել նաև «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 24.08.2021թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ 21.08.2021թ-ին ՀՀ առողջապահության նախարարության կողմից ստացվել է հարցման պատասխան, համաձայն որի սույն ընթացակարգի շրջանակներում բժշկական կենտրոնը չի կարող գնել ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրված ներմուծման հավաստագրերի հիման վրա ՀՀ ներմուծված այնպիսի դեղորայք, որոնք գրանցված չեն ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում: Հաշվի առնելով նշված գրությունը, հանձնաժողովը որոշել է 19.08.2021թ. կայացած թիվ 4 նիստի թիվ 1 որոշումը մասնակի վերանայել և 1, 11, 13, 17, 35, 37, 39 և 43-րդ չափաբաժիններով «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բավարար գնահատելու մասին որոշումը վերանայել: Հանձնաժողովը որոշել է նշված չափաբաժինների մասով գնման ընթացակարգը կասեցնել 1 աշխատանքային օրով և մասնակցին տալ օրենսդրությամբ նախատեսված հնարավորություն՝ առաջարկերը շտկելու համար:

Հանձնաժողովի 25.08.2021թ.-ի նիստի թիվ 6 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ «Վագաս Ֆարմ» ՍՊԸ-ն շտկված փաստաթղթեր սահմանված ժամկետում չի ներկայացել՝ էլ. փոստով ներկայացնելով լիազոր մարմին ներկայացրած բողոք: Հանձնաժողովը որոշել է մերժել «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի հայտը 1, 11, 13, 17, 35, 37, 39 և 43-րդ չափաբաժինների մասով:

ՀՀ առողջապահության նախարարության կողմից ի պատասխան «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 16.08.2021թ.-ի թիվ 08.372 տրամադրված գրության համաձայն՝ Կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1933-Ն որոշման 1-ին կետի 2-րդ կետով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մայիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» N 502-Ն որոշման հավելվածում լրացվել է 2.3-րդ կետ, համաձայն որի՝ ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ կարող են ձեռք բերվել նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 202-Ն որոշմամբ հաստատված կարգին համաձայն Հայաստանի Հանրապետության առողջապահության

նախարարության թույլտվության հիման վրա ներմուծված չգրանցված դեղեր ներմուծման հավաստագրի առկայության դեպքում:

Տեղեկացնում եմ, որ թիվ 1933-Ն որոշմամբ նախատեսված իրավակարգավորումը կիրառելի է բացառապես ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ, իսկ ներկայումս Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում սահմանված կարանտինը թեև պայմանավորված է կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) առաջացած արտակարգ իրավիճակով, սակայն այն իրենից չի ներկայացնում ռազմական կամ արտակ արգդրություն: Հետևաբար «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲ ընկերությունը պետական միջոցների հաշվին դեղորայք ձեռք բերելիս չի կարող առաջնորդվել Կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1933-Ն որոշման 1-ին կետի 2-րդ կետով սահմանված արտոնությամբ:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, ուսումնասիրելով «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/73» ծածկագրով բաց մրցույթ հրավերը, ՀՀ առողջապահության նախարարության կողմից ի պատասխան «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 16.08.2021թ.-ի թիվ 08.372 տրամադրված գրությունը և «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի հայտը՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Հանձնաժողովի կողմից, Ընկերության հայտը մերժելու մասին կայացված որոշման արդյունքում, թույլ չի տրվել Օրենքի 34-րդ հոդվածով, Կարգի 42-րդ կետով և Հրավերի 8.9-րդ կետով սահմանված պահանջների խախտում, քանի որ ՀՀ կառավարության 02.05.2013թ.-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» N 502-Ն որոշման հավելվածի 2.3-րդ կետի համաձայն՝ ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ կարող են ձեռք բերվել նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 202-Ն որոշմամբ հաստատված կարգին համաձայն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության թույլտվության հիման վրա ներմուծված չգրանցված դեղեր ներմուծման հավաստագրի առկայության դեպքում:

Ուստի նման պայմաններում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից դեղորայքի և այլ բժշական նյութերի ձեռքբերման նպատակով 27.07.2021թ.-ին հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/73» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը, «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշում կայացնելով, գործել է իրավաչափ, քանի որ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող դեղորայքը գրանցված չէ ՀՀ դեղերի պետական

գրանցամատյանում, որպիսի պայմաններում չի համապատասխանում Հրավերի սահմանված պահանջներին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Ընկերության կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 25.08.2021թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/70 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**